

ԱՆՑԱԾ ԳՆԱՑԱԾ ՕՐԵՐԻՑ

ՅՈՎՀ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

I

ՀՐԱՉԵԱՆ՝ ԴՈԿՏՈՐ

Հրաչեայի ուսանողական կեանքի վերջին կիսամեակ Գերմանիայի Ննա քաղաքում արդէն սկսելու վրայ էր, բայց Դոքտորական աշխատութիւնը շեռ չեւ էր մնացել՝ շնորհիւ մի չարաբաստիկ հիւանդութեան։ Քանի մօտենում էին վերջին ամիսները, այնքան աւելի բորբոքւում էր նրա սիրտը։ Նա շատ անգամ զգում էր իրան, կարծես, մի շքեղ հարսանիքի հիւրերից մէկը, որի ոչ արտաքինը և ոչ էլ ներքինը համապատասխան է ուրախ ու զւարթ հարս ս. փեսային ու սրանց հմայքով տոգորւած հարսանքաւորներին։ Մինչդեռ նա հայրենիքում այնքան անհամբերօր թեամբ սպասում էր ուսանողական կեանքին, հիմա իր թաղւած էր այդ ցանկալի կեանքում, նա իրան օտար էր զգում և նորից ու նորից հաշուում անցած ու մնացած օրերը։ «Բաւական է, բաւական» — շատ անգամ մտածում էր նա, — վերադառնալ պէտք է վերջապէս այդ սպառնալից «իրական» կեանքը մոնելու համար։ Նա այս խոհերի ժամանակ ընկնում էր մի տենդային անհամբեր տրամադրութեան մէջ, որ չստուկ է պատերազմի շաշտում երկար ժամանակ տաշտութեամբ ճակատամարտին սպասող զինւորին։

Առաւօտից մինչև երեկոյ Հրաչեան կամ համալսարանումն էր կամ դրադարանում, իսկ տանը մինչև ուշ գիշեր գերի էր շառել սիրելի թերթիկներին։ Վերջապէս նա պարտաւոր էր։ Սյոսր նա զրեց իր աշխատասիրութեան վերջին տոշը, ցնծութեամբ վեր ցատկելով հայրենիքն յիշեց, որ մինչև վերջին վայրկեանը ոյժ էր տալիս նրա զգացմունքներին և լուսաւորում նրա միտքը։ Մեր հաջ

ուսանողի թեման էր շալութիւնն իբրեւ կենսունակ տարր մարդկային ազգի մէջ: Նա օտարազգի հին ու նոր աշխիւրները քրքրելով ու պրփրելով քաշել էր այս խնդրի հետ առնչութիւն ունեցող գնահատելի նիւթերը, աշխարհել էր ցոյց տալ, թէ հաւանօրէն ինչ տեր կարող էր խաշալ այդ տարրը ապագայում:

*
* * *

Երբ քննիչ ուսուցչատեղիները կարդացին այս գրածքը, նրանցից մէկը հարցրեց միւսին.

— Ընկեր, ինչ պաւետրութիւն սրացաք այդ հայ ուսանողի աշխատասիրութիւնից:

— Ես քանի շատ կարդացի, — շիտեց միւսը, — այնքան աւելի մեծ հաճոյք պատճառեց ինձ այդ երիտասարդի ուշադրաւ հետազօտութիւնը: Սա նման չէ մերոնց շարերի քաշածական աշխատութիւններին. մի թարմ հոսանք քեզ առնում տանում է: Երբ մարդկանգ չառնելով արտայայտած մտքերի վրայ՝ անընդհատ յառաջ է ընթանում, կարծես մի բանաստեղծութիւն է կարդում. իսկ երբ խորասուզում է նա իմաստների մէջ՝ զմայլում է այս հայ ուսանողի լուրջ ու խորագննին խօսքի վրայ: Նա թէև խոյլ, սակայն շահորսակ ձեռքերով քաշել է ժամանակակից գիտութեան հիմքեր պարտիկները. հին ու նոր պատմութիւնից, քաղաքականութիւնից, ազգագրութիւնից, քաղաքատնտեսութիւնից, ինչից ստես, որ չէ ձգտել օգուտ քաշել իւր թէգիսներն աւելի ծանրակշիւ հիմունքների վրայ դնելու համար:

— Այո՛, ես էլ մօրաւորապէս նոյն պաւետրութիւնն սրացայ, — յարեց խօսակիցը: Զգիտես այս հայրենասիրի թափածը մի յուսահատական ճիւղ է արդեօք, թէ մի խիղախ ոգորում, բայց և այնպէս զնահատելի է: Այնքան համարձակ են նրա մտքերի զուգակշիռները, այնքան արտայայտիչ ու կորովալից նրա զգացմունքները:

— Տեսնենք, ես շատ հետաքրքրուած եմ այս հայ ուսանողով, որ ինձ միայն երկու կիսամեակ¹ է ունկնդրել: Եւ առհասարակ առաջին անգամն է, որ ես հայ ուսանողի հետ զօրժ ունիմ:

¹ Գերմանական համալսարաններում շաստիստութիւնները կարդացւում են կիսամեակներով (≡ սեմեստր),

*
* *

Եւ Հրաչեան իւր քննիչներին ներկայանալու կազմ ու պարտաւոր սրտապարտի շուրս ելաւ տանից: Նա հագել էր, ինչպէս այս առթիւ շոքորաքողների մեծամասնութիւնն է անում, «Ֆրակը», փայլուն «ցիլինդրն» էլ շրած, ի հարկէ առանց մոռանալու սպիտակ ձեռնոցները:

Որովհետեւ այս քաղաքում կառք ասած բանը գործածական էր, մեր շոքորանքը¹ ուրով պէտք է անէր իւր այցելութիւնները: Թխադէմ արեւելին իւր սեւ-սեւ ու գանգուր մագերով գրաւում էր հանդիպողների ուշադրութիւնը: Իսկ հարեանի աղջիկներն ասեցին. «Տեսէք, տեսէք, սեուկն էլ է հեղամուտ շոքորութեան»: Քննութեան նախընթաց օրը այցելութեան պէտք է ելնէր յաջորդ օրեան քննիչներին: Հայ ուսանողը ուսուցչապետներից, այս պարզ մարտկանցից, սիրալիր ընդունելութիւն գտաւ:

— Գլխաւորը, իմ սիրելի, — ասաց նրանցից մէկը, — գրաւորաշխատութիւնն է. և ձերը, պ. Ռաֆայէլեան, արժանի է ամենայն գնահատութեան իւր լուրջ ու հեղաքրքրական բնաւորութեամբ:

— Պարոն ուսուցչապետ, — շիտեց մեր ուսանողը, — մենք, իհարկէ, գիտէք, որ կիսաքաղաքակիրթ ժողովրդի զաւակներ ենք. էհ, աշխատում ենք, որքան հնարաւոր է, նմանիլ մեր գերմանացի ընկերներին: Կայ բան, ուր մեր նախապարտաւորութեան պակասութիւնները այնքան աչքի չեն ընկնում, բայց կայ էլ ուր շատ զգալի են:

— Ինչպէս երևում է, պ. Ռաֆայէլեան, — շիտեց միւս ուսուցչապետը, — ձեր գրածքի ամեն մի տողը յուզած սրտի արտադրութիւն է: Ես լսեցի ձեր ընկերութեան անդամներից որ այդ ուսումնաւորութեան ամենապաք յամանակը ծանր հիւանդութեան մէջ էք ընկած եղել:

— Այո, իմ պ. ուսուցչապետ, խեղճ հայրենիքիս անհուն պահանջները մի կողմից, իսկ իմ սահմանափակ գիտական պաշարը միւս

¹ Շոքորանքը նա է, ով շոքորութեան քննութիւն է տալիս. յաջող քննութիւն տալուց լիցիտ՝ նորան շնորհում են «Շոքոր» (այս ինչ գիտութեան) տիտղոսը:

կողմից ծանր պարտականութիւն էին շնու՛մ վրաս ջա՛նք չխնայել: Գիտէ՞ք ինչպիսի պարտականութիւններ է շնու՛մ մեզ վրայ մեզ եւրոպա ուղարկող հասարակութիւնը, ինչպիսի սիրելի յոյսերով է նա մեզ ճանապարհ շնու՛մ:

— Այո՛, ես վերջերս մի քանի հայ ունկնդիրներ ունենալով աւելի հետաքրքրեցի ձեր ազգի անցեալով: Տեսայ, որ նա որոշ կուլտուրական ապագայ ունի: Ի սրբէ յաջողութիւն ձեզ և ձեր ազնիւ զգացմունքներով տոգորւած հայրենակիցներին: Ազգերն էլ կարող են անհատի պէս հիւանդագին տագնապների մէջ ընկնել, նրանք կը տռչորեն, բայց շիւրաւ կեանքից չ'են զրկւիլ: Հին ազգերի մարմինը կարծես պարւստւած է լինում և նորամոյժ թոյնը նրան միայն անցողակի ցնցումներ է պատճառում:

*
* *

Հայ ուսանողը վերջապէս քննութեան ներկայացաւ: Նա առաջին հարցումներին վեհերոտ պատասխաններ էր պալիս, բայց նրան քանի աւելի էին հարցնում, այնքան ևս առաւել ոգևորւում էր:

— Այս հաջը, շիտեց քննիչներից մէկը, — կատարեալ կրակ է:

— Այո՛, նա արժանի է ամենայն խրախուսանաց, — լարեց միւսը:

— Cum laude ¹ շունջ բարձրացաւ քննական սրահի առջեւ սպասող ուսանողների, Հրաշեալի, հայ ու օտար ընկերների մէջ: Cum laude, կեցցէ: Դէհ, արեմն մի հար էլ յոբորական պակաս, հրճանքով ասում էին զերմանական ուսանողական ընկերութեան Հրաշեալի անդամակիցները:

Հրաշեան իւր հնգամեայ ուսանողական կեանքում ընկերակիցների շար յոբորական տակառների շարարկելուն արդէն մասնակից էր եղել, հետեարար հիմայ էլ իւր հերթն էր ընկերական կեանքի այս սիրուն զարճալիքին նոր աւիթ ներկայացնելու:

Նւ ահա՛ այդ նիստի օրը ընկերութեան մէջ արտաքոյ կարգի ոգևորութիւն է տիրում: Ժողովարեղին մի բաւական ընդարձակ սենեակ էր, որի շուրս պարերի վրայ էլ կախուած էին այլ և այլ ընկերութիւնների կիսամեայ խմբանկարներ, առանձին լուսանկար-

¹ Գովասանօք:

ներ, շրջապարւած գոյնզգոյն Դրօշակներով: Իսկ զարեջրի փայլուն պողերը ծոպերով ու փնջերով զարդարւած կախ էին արւած սփռողորից ներքեւ: Իւրաքանչիւր պատ իւր աչս արդ ու զարդով մի զար ուսանողութեան սեփականութիւնն էր համարուում: Այդ գոյքի լրացուցիչ մասն էր կազմում փոքրիկ մարենադարանի (մեծ մասով հին ու նոր ընկերակիցների աշխարութիւններից) պահարանը, որի մօտ Դրւած ամբիոնն էլ արենախօսին էր սպասում: Սենեակի մէջ տեղը մի մեծ սեղան էր Դրւած, որի վրայ այսօր իբրեւ ցանկալի հիւր բազմած էր պարկառելի ու հաստափոր տակաւը: Ուսանողների երեսները իսկոյն գեղածիծաղ արտայայտութիւն էին արանում, երբ այսօր ուրք էին Դնում Ժողովարեղին: Փայլակ ու կաջձակ, ահա և Հրաշեան, — հրճանքով ձայնում էին նրանք, մի-մի անգամ էլ տակաւի փոքրը դաւազանով տնդելով:

*
* *

«Ճեմարանական» քառորդ Ժամ երեկոցեան 8-ից անց՝ Նախագահի զանգակը հնչեց: Գիտական հերթական արենաքանութիւնը, որ կապ չունէր նորընծայ Դոքտորի քննական աշխարութեան հետ, սկսեց և թէև օրհնեալ տակաւի փորն արդէն ծակել էր, սակայն ուսանողներն ըստ հնաւանդ ազգային սովորութեան՝ սկզբում Դեռ կում-կում էին խմում: Երբ արենախօսը վերջացրեց, բուն ծափահարութեամբ ընդունեց: Նա առջևը Դրած բսժակի վերջին կաթիլները ծծեց ու տեղը դնաց: Ապա ընկերներից մէկը, որ օրայ նշանակւած կոր-րեֆերէնտ կամ քննադատն էր, իւր տանն արած նկատողութիւնները կարդաց, միւսներն իրանցն աւելցրին, միքիչ Դէս ու Դէն քաշքշեցին ու այսօր շուտով սուս ու փուս գիտական մասը փակեցին: Երեւում էր, սր աւելի տրամադրութիւն չկար վիճաքանութիւնը ձգձգելու: Շատ դժուար ունէին:

Նախ հնչեց՝ իբրեւ Նախերգանք Ergo bibamus: Յետոյ նստագահը ուրքի ելնելով անպէս խօսեց.

— Պարոններ, այսօր ուրախակից լինելով մեր սիրելի ընկերին, Հրաշեայ Ռաֆայելեանցին, միւսնոյն Ժամանակ ներկայան պարտականութիւն ունինք, նրա աշխատութեան կարգը կատարելուց առաջ, այս մարդուն մկրտելու, որովհետեւ, ինչպէս բանից Դուրս է դա-

լին, ըստ մեր լրտես աշէսներին¹ տեղեկութեանց՝ նա Լալայցիգում էլ արարողութիւնից խոյս փառ՝ լինելով մինչև հիմայ անհաւարտ է մնացել: Ու թող միւս անկնունք մնացած աշէսներն էլ պատրաստութիւն տեսնեն ու խոստովանահայրեր ընտրեն:

Այս առաջարկութեան վրայ աշէսները իրանց համար մի մի աշխատարկ կամ, ինչպէս իրանք են ասում, ֆուքսմալեօր ընտրեցին, իսկ Հրաչեային, որ արդէն աւագ ուսանող էր, կարող էր միայն նախադաշը խոստովանեցնել: Ապա բոլոր անհաւարտները՝ աթոռների վրայ ձի-ձի խաղալով շուրս արշաւեցին ու նորից թախկու թուխով իրար հրմշտկելով խուժեցին ներս: Ներսը մնացած աւագներն էլ աթոռները սեղանի վրայ դրած ծանր ու մեծ բազմած ստորաքարշ ճորպերին էին սպասում: Չիաւոր աշէսները առաջընթաց աւագի հետ երեք անգամ սեղանի շուրջը թափօր անելով կանգ առան՝ իւրաքանչիւրը իւր խոստովանահօր սուշև:

Նախ Հրաչեան՝ իրրեւ տաղ՝ քննութեան ենթարկեց:

—Ձինչ խնդրէ մոլորեալ ոչխարս աչս,—հարցրեց խոստովանահայրը:

—Հաւար, գարեջուր և սէր, պատախտանեց խոստովանողը:

—Կեցցէ, կեցցէ, բռնն ծափահարութիւնը օդը թնդացրեց:

—Ինչպէս տեսնում եմ,—դիտեց քննիչը,—շու հաւարացեալին պիտանի բոլոր իմաստութիւնը արդէն ձեռք ես բերել, ուրեմն այլ ևս արկելք չկայ և շու արժանի ես մկրտութեան:

Այս խօսքի վրայ նա բարձրացրեց հաղին եղջիւրը, որ լի էր գարեջրով և երեք անգամ վազեցնելով Հրաչեայի գլուխն ի վայր, իւրաքանչիւր անգամ ասում էր. եղիցի և եղիցի հաւարարիմ ծառայ աչս ակտարոցժ հեղուկին:

—Կեցցէ, աչսօրւայ առաջին հաւարացեալը, ձայնեցին հանդիսականները և միւսները շարունակեցին մկրտութիւնը: Երբ աչս ծէսը աւարտեց, նորընծաները դարձեալ նախկին եղանակով արշաւեցին ու հասան իրանց տեղերը:

Ինչպէս ՎՍ, հին բուրձնշափտ երգը:

¹ Ուսանողական ընկերութեան մէջ նոր մտնողները Գերմանիայում ֆուքս (աշէս) են կոչուում, մինչև ընկերութեան իսկական անդամ մկրտութիւնը:

*
* *

— Պարոններ, ասաց նախագահը, հրե երգը վերջացաւ. նիւթերը (գարեջուրները) պատրաստ են, Հրաչեայի կենաց սալամանդը¹ եւք խմելու: Այս բառը լսելուն պէս բոլորը կազմ ու պատրաստ պէտք է լինէին:

— Իսկ հիմա, կրկնեց նախագահը, — նիւթերը պատրաստ են:

— Պատրաստ են, — միաձայն պատասխանեցին ամենքը միասին: Հիմա, Հրաչեայի կենացը:

— Սալամանդը:

Բոլորը մէկէն ուղքի կանգնեցին ու բաժակների բերանները բաց արին:

— Սալամանդը մէկ, — գոչեց նա:

Ակսեցին բաժակները սեղանին քսմանով պտըտցնել:

— Սալամանդը երկու, կրկնեց նա:

Բաժակները շրթունքներին մօտեցրին:

— Սալամանդը...

Դեռ երեք չասած՝ բոլորը մի ակնթարթում կէս-կէս բաժակ կոնծելուն պէս սկսեցին բաժակները սեղանին մի անգամ զարնելուց չեփոյ թխթըխկացնել:

— Երեք, լսեց նախագահի կտրուկ ձայնը, և սալամանդը վերջացաւ, երբ բոլորը միասին բաժակների չափակներով մի-մի ուժգին ու կտրուկ հարւած տւին սեղանին ու տեղները նստափեցին:

Հիմա, վեր կացաւ Դոբրորը ու այսպէս խօսեց.

— Եւ մի սիրելի եղբայրներ. թէև գերմանացիներիդ մէջ շատ էլ ընդունւած է այսպիսի առիթով ճառեր ասելը, բայց թոյլ տւէք ինձ՝ այս անգամ իբրև արևելցու՝ սովորականից աւելի ձեր համբերութիւնը խնդրելու: Ի սրտէ շնորհակալութիւն ձեր սիրալիր ընկերակցութեան համար: Հրաժեշտիս օրերը աւանդ մօտենում են, հրաժեշտի, որ պիտի տամ ձեզ, մեր սիրելի ու զթառափ ավամամտերին², որ ինձ էլ իւր շնորհաբուլիս սուրբ ձեռքով բաժին հա-

¹ Սա մի բառախաղ է «բոլորդ միասին կոնծեցէք» լատինական բառերի որոշ տառերից կազմւած:

² Համալսարանին:

նէ իւր ճօխ սեղանից, հրաժեշտ պիտի տամ ձեր մեծ հայրենիքին ու հեռանամ նրա հոյակապ կեանքից։ Ես շատ անգամ տեսայ, թէ մինչև անգամ գերմանացի ուսանողներդ ինչպիսի ծանր սրտով էք հեռանում այս հմայիչ ուսանողական կեանքից։ Բայց միայն՝ ուսանողական կեանքից։ Իսկ մենք։ Վհ, համեմատութիւն չկայ ձեր իրական կեանքի և այն կեանքի մէջ, որ մե՛զ է սպասում։ Դուք իրաւունք ունիք վայելելու ձեր ծակտի քրտինքի վաստակը, իսկ մենք ոչ ամեն տեղ և միշտ։ Դուք արագ թռիչքով յառաջ էք մղում քաղաքակրթութեան գործը, իսկ մենք շատ անգամ մեր ունեցածիցն էլ ենք զրկւում։

Հրաչեային ի պարասխան նախագահը վեր կացաւ ու այսպէս խօսեց։

—Մեր սիրելի ընկեր, Դու այսօր մի երկու խօսքով ներկայացրիր մեզ ձեր հայրենիքի անցեալն ու ներկան։ Բայց քանի որ Դուք թէև վհատում էք, բայց չէք յուսահատուում, մեզ մնում է միայն յաջողութիւն ցանկալ քեզ և քո ընկերներին այդ փշուր ասպարէզում։ Վարեցէք, ցանեցէք, սիրելիս, այն սերմերը, որ Դուք տանում էք Եւրոպայից. նրանցից շատերն անշուշտ կը բեղմնաւորին։

*
* * *

Աղէսապետները իրանց ամբողջ հմտութիւնն ու սրամտութիւնը բանեցնել սկսեցին՝ խեղճ աղէսներին ու Հրաչեային ժամ առաջ կոնծաքանութեան զազաթնակէտին հասցնելու համար, որտեղից Բաքոսեան հրաշագեղ աշխարհը նրանց պիտի ներկայանար իւր ամեն հմայքներով։ Եւ որովհետեւ համաձայն ուսանողական խիստ օրէնսդրութեան՝ աղէս առած մարդը և ոչ մի չէպքում իրաւունք չունի զլխաւորներին ընդիմանալու, հակաճառելու, նրանց ծաղրելու և նոյն իսկ որ և է առարկութիւն անելու, ուստի այդ մեծաւորներն ամեն վայրկեան հնարաւորութիւն ունէին ճորտերին կէս և նոյն իսկ ամբողջ բաժակ մի անգամից Դատարկել տալու։

—Կոնծիր, աղէս, չըհամարձակես խելք թափել, հրամայում էր մէկը։

—Կոնծիր, կոպիտ աղէս, չափդ ճանաչես պէտք է,—բարկանում էր միւսը։

— Կոնծիր, հա կոնծիր, բայց շու ախր քանի վեցամսեակ ունիս բողբոլում էր ֆուկսերից մէկը:

— Ձորս:

— Դէ որ այդպէս է, մէկ շու շնորհ արա, վերցրու. մոռացել ես հա, որ ես հինգ ունիմ:

— Օհօ, ի՞նչ շատ ես երկարացրել լեզուդ, մէջ էր մտնում երրորդը. շու մոռանում ես նւաստ շիրքդ, ո՞վ նուլցէ:

— Ի՞նչ էք հրամայում: Ձերը քանի է:

— Երեք. վաճ երկուսիս ոտքերն էլ քարին եկաւ: Դէհ, կոնծենք:

Աղէսապետները շնորհ էին անում երբեմն էլ այս կամ այն աղէսին «բրուդըրշաֆտ» կամ եղբայրութեան թաս խմելու: Նախ թեանցուկ էին անում և բաժակները բռնած բերանների մօտ իրար ասում. «Բրոջս կնութեան չառնես ու պարպքերս վճարես»: Այնուհետև բաժակները շարարկելուց յետոյ միայն այս ընկերներն իրար հետ շուով խօսելու իրաւունք էին ստանում:

Դեռ մեծաւորները գլուխները չէին կորցրել, երբ նախագահը հրամայեց «Ուսանողական սիրտ» երգն ասել: Ապա նա մի փոքր ընդմիջումից յետոյ լցնել տւեց եղջիւրը մի կում խմեց ու տւեց հետեւալին՝ ամբողջ շրջանառութեան համար:

*
* *

Ժամանակն արդէն բաւականին անցել էր: Պատկառելի տակառը սկսել էր յուսահատական արձագանք տալ, որ շատ անախորժ էր կոնծապետներին:

Քիչ էր անցել, որ մեր զոքսորն էլ շափերի պէս գլուխը բոլորովին կորցնէր, երբ նախագահը շտապեց վերջին երգն ասել տալ:

Մի քիչ յետոյ ամենաազահները մօտեցան տակառին ու նրան վերջնական օպերացիայի ենթարկելով՝ ծուծը քամեցին: Արդէն հիմա նրա արձագանքը կատարեալ էր: Հիմա նախագահը կարգադրութիւն արա հէն (=պարոն) զոքսորի վերջին արարողութիւնները կատարելու: Ձորս հոգի շուրս գնացին, երկու ձողերի վրայ մի կողմից շուռ ուսերին առած ներս մտան: Միւսները այս պատգարակի վրայ պառկեցրին համարեա ուշաթափ զոքսորին ու զէպի Զաալ գետի եզերքն ուղեորեցին՝ հիմա էլ նրա յուշարկաւորութիւնը:

կատարելու: Անճոսնի երգեցողութեամբ, ճըւճըւ ոցով ու հրհրուցով ծանր ու բարակ յառաջ էին ընթանում: Երբ տեղ հասան, ննջեցեալին վայր շրին և շանթանական ճառից յետոյ մի այնպիսի վայնասուն բարձրացրին, որ ոտքիկանը ափալ թափալ վրայ հասաւ: Քէկ նա գիրէր, որ այսօր էլ ուսանողների հետ կաիւ ու քաշքշոց էր ունենալու, սակայն ինչ անէր: Այս քաշաքը և ալպցիգ ու Բերլին չէր... Նրա փայլուն սաղաւարտը մթութեան մէջ փայլփլեց:

— Պոլիպը¹ գալիս է պարոնաչք, ասեցին փղեբքը և աւելի թունդ զլեցին իրանց համերգը:

— Լուսթիւն եմ խնդրում, պարոններ, — առաջի բերան անխոռով սրտով ասեց ոտքիկանը:

Ուսանողները չտեսնել ձեանալով՝ նորից աւելի մեծ գոռում գոչում շրին:

— Պարոնաչք, կրկնում եմ լուսթիւն, — այս անգամ մի աստիճան աւելի բարձր ձայնեց պոլիպը:

Բայց ամենքը խուլ են: Ընդհակառակն սկսում են մի բանիսը կատարի պէս մլաւել, շան պէս օսնալ ու վրնկտալ: Մի կատարեալ «կատու-համերգ»: Ոտքիկանի համերբութեան բաժակը լցւում է, մօտենալով մէկին թափով ձերբակալում է և յէպի բանտ է հրաւիրում: Այս խօսքի վրայ մեր ննջեալը սթափում է, զարութիւն է առնում և նրա «ինչպէս էք համարձակում ասելն ու հրմըշտկոցին խառնելը մէկ է լինում» ընկերին ազատելու շիրաւորութեամբ: Սրտմտած պոլիպը առաջին կալանաւորին թողնելով այս ըմբոստին է բռնում ու սուլել սկսում: Վալանաւորը ընդշինադրութիւն է ցոյց տալիս, քաշքշում, ճըւճում, բոորըռում է: Միւսները քաշքշոցը շնում են, պոլիպը նորից և աւելի ուժգին սուլում է, պաշտօնակիցները վրայ են հասնում: Եւ ահա երկք ոտքիկան իրանց որսերով բռնում են «մութ ծակի» ճանապարհը: Երբ որ փողոց են մտնում, ընկերութեան նախագահը միջնորդում է, որ իւր երաշխաւորութեամբ այդ երկու բռնաւորներին այս գիշեր

¹ Պոլիպոյ բազմութեան կենդանին, որ ծովում ամենալն շիրութեամբ որս է անում:

Թոյլ Կան երթալ քնելու: Նորա այցեպտման ստանալուց յետոյ յո-
լիպները բարեհաճում են ազապել ըմբոստ որսերին:

*
* *

Միւս օրը՝ վաղ առաւօտ Հրաչեայի հայ ընկերները շտապեցին
նրա բնակարանը՝ քէֆն ու հալը հարցնելու և բանի հուծիւնը
իմացնելու, թէ նրա վրայ հասարակ գործ չէ բացւելու, այլ քրէա-
կան, և այն էլ լինչպիսին: Ո՞վ գիտէ ինչ ծանր պատժի պիտի են-
թարկեն: Հարախնդացութեամբ աւելացնում էին նրանք:

— Զահլէս մի Կանէք է, անպիտաններ, թողէք մի քունս առ-
նեմ: Լուսուծէգին ինչ ներս ընկաք, մըռթմութեաց մախմուրը:

— Որեւի հայրենակից, մեր պարտականութիւնը շուտափոյթ
կատարելու զգացումն էր որ մեզ այսպէս շտապեցրից:

— Օ՛հ, ինչ անձնւիրութիւն, էլ խօսք ունիմ: Հնչէ Դուրս,
— հրամայեց քնաթաթախ և միւս կողքին Դարձաւ:

Ընկերները առաջին անգամայ համար այս պորցիան բաւա-
կան համարեցին ու սպառնալիքներ կարդալով Դուրս հլսին: Զորս
օր յետոյ կոչնագրերն եկան: Գործը ոստիկանութիւնը նախ Վայ-
մար մայրաքաղաքն էր լրկել, բայց Դարարանը Դիտելով, որ այս
էլ ռուսանոյական չարութիւնների կարգիցն է, այլ ընթացք տեց
Դարավարութեան: Բայց և այնպէս կոչնագրի մէջ չէին մոռացել
հետեւեալ ահաւոր խօսքերը. «Դարի է կանչում ոստիկանի վրայ
ձեռք բարձրացնելու համար՝ սրա պաշտօնավարութեան միջոցին»¹:
Հրաչեային այդ խօսքերով շատ էին վախեցնում տղերքը, շեշտելով
որ այդ «ծանր ամբաստանութիւն է»: Յանցանքը քրէական է ու
քրէական, ասում էր մէկը: Բանտարկութեան հոտ է գալիս ու գա-
լիս, յարում էր միւսը...

«Ուսանողական չարութեանց» Դարավարութեան համար նշա-
նակեալ օրը մայրաքաղաք Վայմարից² ըստ ընդունած կարգին՝

¹ Thätig angegriffen, առած էր կոչնագրում:

² Վայմարը մայրաքաղաքն է Սաքսէն-Վայմար-Էյզենախ կոչւած
գերմանական մեծ-Դքսութեան, որի մէջ է և համալսարանական փոքրիկ
Յնա քաղաքը:

մասնւորապէս առանձին շարաւոր էր եկել, որ երկու շաբաթը մի անգամ բաւականին գործեր էր ունենում այս բաշխման ժամանակը անհաշիւ քաղաքում, ուր խեղճ սփռականները անգուսպ ուսանողներին ձեռքը կրակն էին ընկել:

Նոյն օրը մի գործ էլ քոր-շրուշէններին¹ Պրանկն ընկերութիւնն ունէր:

Այս մենամարտիկ ու կոնծարան ընկերութեան շունը կիրակի առաւօրեան ժամերգութեան ժամանակ եկեղեցու դռանը հաշիւու անխոհեմութիւնն էր ունեցել: Առողջանալու այս առաջին անգամը չէր, ուստի այդ կենդանու յանցանքն էլ թեթեւ չէր: Բայց, ի հարկէ, մեղադրւածը ներկայ չէր, այլ նրա տեղ ընկերութեան իրաւարան նախագահն էր եկել՝ իբրեւ պատասխանատու: Հանդիսարանն ուսանողները, նրանց բարեկամները, նշանածները, հետաքրքիր փիլիսոփայներ (քաղաքացիներ) նիստից շար առաջ բոլոր տեղերը բռնել էին: Մինչեւ անգամ Հրաչեայի պառաւիկ տանքիկինն էլ էր եկել՝ իւր շրուշէնի (ուսանողի) միակ խեղճութեան դատարարութիւնը լսելու: Աւերջը՝ առաւօրեան կոնծարանութեան կամ փրիւշտիւնից լեզուց՝ միանիւ աղբակիր սալակով եկաւ երկրի տեղի: Աւսմարի մեծ դքսի, ուսանող որդին, որ նոյնպէս անդամ էր այդ ազնւականաց ընկերութեան: Ձահէները ներս ու դուրս էին անում, վրստովւարում ու քշիւում էին: Քոր-շրուշէններին ընկերութեան իրաւարան ընկերները նորից ու նորից գործը պաշտպանողի ականջով խորհուրդներ էին փոխում, իսկ Հրաչեայի ընկերներն ընդհակառակը նրան վնասեցնել էին աշխարհում:

—Այսօր էլ, Հրաչեայ,—ասում էին նրանք,—համբարձմանդ հանդէսը կը կատարուի:

—Անշուշտ կ'արժանանաս ուսանողական բանտի վերնատանը:

—Ձեռ վերցրէր,—պատասխանում էր նա կեղծ ժպտով: Մեր հայ ուսանողը թէեւ այդպիսի բաներ շար էլ աշխուժ ձգող տղա չէր, բայց վերջին ժամանակներս զուլսը կորցրել էր, քննական աշ-

¹ Քոր նշանակում է մարմին, ալմենքն կորպուս. քոր-շրուշէնք (կորպուսի ուսանող) կոչում են այն ընկերութիւնների պատկանող ուսանողները, որոնց կանոնադրութեան մէջ մենամարտութիւնը պարտադիր է:

խափութիւններէց, մորմոքիւ մտածմունքներէց նրա ջշերն ուժաւորուել էին: Նա մեծ կարիք էր զգում հանդարութեան՝ այս ուսանողական կեանքի վերջին օրերը անդորր սրտով վայելելու Բաց անա և քեզ բանտարկութեան խնդիր: Verfluchtes Bier (անիծեալ գարեջուր), ասում էր նա իւր մտքում:

*
* *

Վերջապէս հանդիսաւորապէս դուրս եկան շաքուտները: Առջևից գլխաւորը, պաշտօնական շաքուտը, մի բարձրահասակ պարթև մարդ, երկար բեխերով ու սափրած երեսով, նրա աջ կողմից կողքէ կողք ընկնելով յառաջ էր գալիս երշիկավաճառ կարմրաթշիկ Ռուշնաուպուր և հաստափորիկ վաճառական Վերմերթը. երկուսն էլ կարճահասակ, միայն թէ Ռուշնաուպուր վիզը ի բնէ մի քիչ ծուռ էր: Իւրաքանչիւր անգամ, երբ վկաներից մէկը ասեան էր զալիս, շաքուտը չիշեցնում էր օրէնքի հետեւալ անաւոր սպառնալիքը.

—Պարոն վկայ, յանուն սուրբ օրէնքի նախազգուշացնում եմ ձեզ՝ իբրև ազնիւ մարդ՝ վկայել առանց կողմնապահութեան. հակառակ դէպքում՝ օրէնքի 1425 յօդ. տրամադրութեամբ սուր վկայութեան համար կարող էք ծանր բանտարկելութեան ենթարկուել: Հրաշեայի վկաներից առաջինը, որ զերընբուրգի էր, սաստիկ վախեցաւ: Առանց այն էլ նրա սիրտն անհանգիստ էր: Ապա շաքուտը հրամայեց.

—Բարձրացրէք ձեր երեք մասն աջապէս և կրկնեցէք իմ խօսքերն իբրև երդում: «Ես Մորից Վլոց, յանուն Հօր և Որդւոց և Հոգւոցն Սրբոց երդւում եմ տալ հետեւեալ ճշմարիտ վկայութիւնը: Վկան կրկնեց մի քիչ Դողդողալով: Ընկերները ծիծաղում էին կամացուկ:

—Ես, իբրև ազնիւ մարդ, երդւում եմ, կարծես օթափակելով ասեց նա,—որ ինքս էլ բաւականին հարբած լինելով ամեն բան երազի պէս եմ չիշում: Որովհետև մենք այդ փորձանքի մէջ ընկանք մեղադրւած Ռաֆայէլեանի Դոքտորական քակառը քամելուց յետոյ, ուստի շատ բան չեմ չիշում: Միայն այնքան տեսայ, որ մեղադրւածն ու գիշերապահ ոտարկանը քաշքշւում էին: Իմ գլուխս էլ սրտոյս էր զալիս. գուցէ նրանք իսկի էլ չէին քաշքշւում. ով է

իմանում. գուցէ և աչքերս խաբ առան, իլլիգիայի ենթարկեցին:

— Ուրիշ ինչ ունիք աւելացնելու, — հարցրեց նախագահը:

— Այլ ևս ոչինչ:

— Բրաւօ, — կամացուկ հաւանութիւն փոխ ընկերութեան անշամները:

— Այդ վախկոտից ռի էր սպասում մի այդպիսի վկայութիւն:

— Ներս հրաւիրեցէք երկրորդ վկայ պ. Ռաշին, — հրամայեց նախագահը:

Սա համարձակ ներս մտաւ և որովհետեւ շատ վարժ էր այդպիսի վկայութեանց մէջ, ներածման բանը շուտով վերջացրեց ու շարունակեց.

— Ես, պարոնայք Դադաւարներ, զուխս այնքան էի կորցրել, որ այն պահուն զարմանքով մտմտում էի, թէ այս ինչպէս է եղել, որ ոստիկանն հարբել է. բայց բանից Դուրս եկաւ որ իսկապէս ես ինքս եմ արբած եղել: Այսպիսի հանգամանքներում, պարոնայք Դադաւարներ, ես խղճիս թոյլ չեմ տալիս մէկին պաշտպանել և միւսին մեղադրել:

— Բարի, — ասեց նախագահը, — թող հիմա ներս գայ մեղադրւած պ. Ռաֆայէլեանը:

Երբ Հրաչեան ներս մտաւ, նրա թխտրակ երեսը, սև-սև ու կրակոտ աչքերը, նրա երկար մազերն անմիջապէս զրաւեցին հանդիսականների ուշադրութիւնը: Նա աշխատում էր իրան հանգիստ ու անտարբեր ցոյց տալ:

— Այս սեռէն ինչ ազգից է, — հարցրեց օրիորդներից մէկը իւր խօսակից ուսանողին:

— Ասում են Armenier (= հայ) է:

— Ռումէնիէր (= ռումանացի):

— Ո՛չ, օրիորդ Կոլէշ, երևի մոռացել էք և ինչպէս շուտ՝ Նոյեան տապանի պատմութիւնը, Արարմար, Արմենիան:

— Այ՛ո, այ՛ո, չիշեցի, ուրեմն սա մեր ամենիս նահապետի հին ցեղիցն է հա՛ւ: Ա՛յ քեզ հետաքրքրական բան: Երևի մեր զարեծրին չեն յիմանում Նոյեան թթու գինի խմող վալերինիները:

— Պր. Ռաֆայէլեան, ինչ ունիք ասելու ձեր վրայ բարդած մեղադրութեան վերաբերելու:

— Պարոնայք Դատաւորներ, ես երկար բան չունիմ խօսելու։ Կարծում եմ որ վկաններս բանի էութիւնը ճշմարտապէս ներկայացրած լինելով՝ հաւորշած կը լինին ատեսներն իմ վերին աստիճանի հարբած լինելս գործին վերաբերեալ ժամուն։ Ես միայն այնքան եմ յիշում, որ ինձ մեծ զայրոյթ պատճառեց գիշերապահին միջամտութիւնը մեր քէֆին. ի հարկէ մոռացել էի, որ գիշերապահին քաղաքացիների հանգիստը խանդարելու իրաւունք չունէինք։ Այլ ես բան չունիմ ասելիք, միայն խնդրում եմ խոնարհաբար ի նկատի առնել, որ այդ օրը իմ Դռքտորութեան տակառի հետ կապած բոլոր ծիսակատարութեանց ենթարկելու պարտականութիւնն եմ ունեցած եղել։

Նոյն կերպով բնութեան առնելով նաև Ռաֆայէլեանի ընկեր Ռոսբախի գործը, Դատաւորները հեռացան ատենից ու խորհրդարան մտան։ Այնտեղ երկար ու բարակ խորհրդակցելուց յետոյ եկան այն կարծիքին, որ ոստիկանութիւնը այդ գործն իսկապէս իզուր էր այնքան ուռեցրել և մայրաքաղաքը շրկել։ Ուստի վերջնական տուգանք նշանակեցին Ռաֆայէլեանին 5 և Ռոսբախին 8 մարկ։ Այս նորից ատեն եկան, բազմեցին ու այս վճիռը հանդիսաւոր կերպով յայտարարեցին։

*
* *

Վերջապէս սկսեց անկարգ շան Դատը։ Հեքտոր էր շան անունը։ Վերոյիշեալ ընկերութեան նախագահը մեծ հմտութեամբ ու ճարտարութեամբ պաշտպանում էր Հեքտորի գործը։

— Մեր ընկերութեան ժողովարանը, — ճարտասանում էր նա, — եկեղեցուն կից է։ Ժամասացութեան միջոցին պատասխանատու Հեքտորը մեր բակումը հանդիստ պառկած էր, երբ եկեղեցու Դռնից յանկարծ մի հաջող լսեց։ Մի ակնթարթում կատաղած Դուրս վազեց նա ու նորեկ շան վրայ վազեց։ Մենք քանիցս չարաչար պատժել ենք այդ չարաճճիին, զանազան զրկանքների ենթարկել, որ այդ տեղումը չհաջէ, բայց էլի իւր շնութիւնից ձեռք չի վերցնում ու չէ...

— Բայց պ. պատասխանատու, — Դիրողութիւն արաւ նախագահը, — խնդրեմ պատասխանատուութեան տեսակէտից չշեղւիք և

աւելորդ մանրամասնութեանց մէջ չմտնէք. ձեր շան ոգեկան յուզման պարծառներն և այլն և այլն մեզ չեն կարող հետաքրքրել: Խօսեցէք, խնդրեմ, զործի էութեան մասին (sachlich):

— Ես այլ ևս ոչինչ չունիմ աւելացնելու, — յարեց իրաւարան ուսանողը: Հանդիսականները մազ էր մնում, որ հրահրուցը շնէին: Նախագահն իր արեւնակիցների հետ հազիւ էին բռնում իրանց ծիծաղը: Նա կծուրում էր շրթունքները. շունչը փորն էր քաշում, որ չծիծաղի: Ճարտար իրաւարանի ընկերները շշուկներով հաւանութեան մէջ ցոյցեր էին անում: Դատաւորը վերկացաւ, նրա եզակից էլ հասարակօր խորհրդակիցները, և խորհրդարան մտան: Դատաւարութեան այս ընդմիջման ժամանակ Դանլիճում մեծ քրքր-քիչ բարձրացաւ: Ներսը Ֆիլիսոփա Դատաւորներից մէկի համերու-թիւնը կարեց:

— Փայլակ, կայծակ, — զռեց Ռուշհուպուր, — գժում են, ինչ է այդ ուսանողները:

— Զահել են, ջահել, — նկատեց ընկերը:

Հեքիորի զործը այս կողմ քաշեցին, այն կողմ քաշեցին և համաձայնեցին նախագահի կործիքին, որ այս չանցանքն էլ թեթեւ քան է: Բայց որովհետեւ ընկերութիւնը սրանով երրորդ անգամն է որ թերանում է, ուստի 10 մարկ տուգանքի պէտք էր նրան ենթարկել: Կրկին հանդիսաւորապէս Դուրս եկան ու յայտարարեցին:

— Վա՛յ ձեզ, Դեքիոր Հրաշեայ և կանդիշափ Ռոսարիս, — ծաղրում էին ընկերները, — ցեւեք, շանն աւելի մեծ պատասխանատւութեան ենթարկեցին՝ քան բանաւոր արարածներիդ: Հրաշեայ, այս ազարմանդ առթիւ էլ մի տակաւ լինք խմում, ասում էին նրանք: Մեր հերոսը միայն ժպտում էր:

Եւ այսպէս վերջացաւ այս ուսանողական զործերի դատաւարութիւնը: Դատարանից Դուրս ելնողը լակամալից կը չիշէր ուսանողական երգերից մէկի այն խօսքերը, թէ՛ լամեն բան լոկ հաւաք էր: Այ՛ո, մինչդեռ արեւելցին ծերացած է լինում երկրասարդ հասակում, եւրոպացին մինչեւ մահ առնէր է մնում: Բարձր շիրքի հասած ծերացած մարդիկ, երբ զալիս են իրենց վաղեմի ուսանողական ընկերութեանց յորելեաններին, այնպէս նիստ ու կաց են անում, այնպէս նրանք սրտանց հրճում, մասնակից են լինում ուսանողական զժութիւններին, որ կործես թէ 50—60 տարիները նրանց վրայից սահել անցել են՝ առանց հետք թողնելու: